ՄԵՐ ՅՈՅՍԸ ՊԷՏՔ Է ՄԵ՛Ր ՎՐԱՅ ԴՆԵՆՔ

Posted on March 10, 2020 by Keghart



Category: Opinions

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳԱՐԵԳԻՆ ՉՈՒԳԱՍԶԵԱՆԻ ՀԵՏ

(«ՍԱՍՆԱՅ ԾՌԵՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ)

«Սասնայ Ծռեր» Համահայկական Կուսակցութիւնը (այսուհետեւ՝ «Ս.Ծ.») կարեւոր ներկայութիւն մըն է Հայաստանի քաղաքական երկնակամարին վրայ եւ կը վայելէ ոչ-արհամարհելի թուով հայոց, յատկապէս երիտասարդութեան յարգանքն ու վստահութիւնը: Կուսակցութիւնը հիմնուած է 2018-ի Սեպտեմբերին: Սկզբնական շրջանին՝ նախագահ Սերժ Սարգսեանի տարիներուն, «Ս.Ծ.»ը կը յատկանշուէր շեշտուած հակառուսական տրամադրութիւններով եւ զօրաւոր ընդդիմութիւն ցոյց կու տար Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան: 2018-ի խորհրդարանական ընտրութիւններուն «Ս.Ծ.»ն ստացաւ քուէներուն միայն 1.86 տոկոսը, որու հետեւանքով ան իր ներկայացուցիչը չունեցաւ Ազգային Ժողովին (խորհրդարան) մէջ:

«Ս.Ծ.»ը կը ջատագովէ ռազմավարական դաշինքի մը հաստատումը ԱՄՆ-ի եւ միաժամանակ Իրանի հետ, ինչպէս նաեւ սերտ յարաբերութիւններ ստեղծել Եւրոպական Միութեան, Ուքրաինայի, Վրաստանի, Չինաստանի, Հնդկաստանի հետ եւ շարունակել պահպանել հայ-ռուսական աւանդական յարաբերութիւնները:

Վերջերս «Ս.Ծ.»ն հանդէս եկաւ մամլոյ ասուլիսով մը, որու ընթացքին կուսակցութեան ներկայացուցիչները կարեւոր հաստատումներ ըրին յառաջիկայ ժամանակաշրջանին իրենց որդեգրելիք քաղաքականութեան եւ Հայաստանի Հանրապետութեան ներկայիս իշխանութեան քաղաքականութեան վերաբերեալ:

Ստորեւ կը ներկայացնենք մեր հարցազրոյցը «Ս.Ծ.»ի ղեկավար մարմինի անդամ պրն. Գարեգին Չուգասզեանի հետ:

Երկու խօսք. Սոյն հարցազրոյցը կատարած ենք Յունուարի վերջաւորութեան, այն օրերուն, երբ քաղաքական ուժերը կը սկսէին բեւեռանալ, իսկ սահմանադրութեան բարեփոխութեան մասին թեր ու դէմ կարծիքները սկսեր էին հրապարակ իջնել: Սպասեցինք մինչեւ որ այս հարցով ալ միտքերը յստականան եւ քաղաքական ուժերը հրապարակեն իրենց կեցուածքները:

Հարցում.- Հայաստանի հասարակութեան մէջ կայ ընդդիմութիւն, ինչ որ բնական է եւ անհրաժեշտ, պայմանով որ խաղի օրէնքներով շարժին եւ

նպաստեն երկրի ժողովրդավարութեան զարգացման, այսինքն ըլլան առողջ եւ կառուցողական ընդդիմութիւն: Ձեր ընդդիմութիւնը ինչո՞վ կը տարբերի այլ ընդդիմադիր հոսանքներէ:

Պատասխան.- Նախ ասեմ թէ վերջին տասնամեակներին ունեցել ենք քաղաքական ամայացած դաշտ. մինչեւ 2018թ. առկայ պայմաններում քաղաքական ընդդիմութիւն դասական իմաստով չէր կարող լինել: 2018-ի ժողովրդական համընդհանուր խանդավառութեան պայմաններում մենք գտնում էինք, որ պէտք է ազատուել նախորդ վարչակազմի մնացորդներից: Նոր իշխանութիւնները բաւականին ուշացրեցին դա, թեեւ այդ մասին բազմիցս յիշեցնում էինք:

Անցումային արդարադատութեան գործիքները չդիտարկուեցին ըստ էութեան եւ դա հանգեցրեց այսօրուայ ճգնաժամային պատկերին... Հետեւաբար վրէժխնդրականները (*ռեւանշիստ*) աւելի ու աւելի լկտիացրին իրենց գործունէութիւնը: Այս պայմաններում տարբեր-տարբեր ձայներ են լսւում: Որպէս ընդդիմադիր կուսակցութիւն, մենք էլ մեր ձայնն ենք բարձրացնում այս ճգնաժամային վիճակից դուրս գալու մասին: Առաջին խնդիրներից մէկը պէտք է լինէր քաղաքական դաշտ ստեղծելու խնդիրը, կուսակցութիւնների մասին օրէնքի ընդունումը, բնականաբար՝ ընտրական օրէնքի վերանայումը եւ նոր օրէնքի ընդունումը: Այս բացթողումների պայմաններում տեղի ունեցան խորհրդարանական ընտրութիւնները եւ ունեցանք այն խորհրդարանը, որն այսօր ունենք:

Իրականութեան մէջ, խորհրդարանական ընդդիմութիւն որպէս այդպիսին գոյութիւն չունի. 5-րդ շարասեան ներկայացուցիչները ընդդիմութիւն չեն կարող լինել: Մենք պէտք է մաքրէինք այս դաշտը, որպէսզի ունենայինք իսկական ընդդիմութիւն:

Վերադառնալով տարբերութիւններին, կ’ընդգծէի ուժեղ համագործակցութիւնը տարբեր կուսակցութիւնների եւ իշխող կուսակցութեան միջեւ, որը հնարաւորութիւն կը տար ստեղծելու ազգային համաձայնութեան կառավարութիւն, որը արտակարգ իրավիճակի պայմաններում է առաջանում եւ աւարտին է հասցնում յեղափոխութիւնը:

Հարցում.- Ըստ ձեր կուսակցութեան՝ ի՞նչն է պատճառը, որ կարգ մը բարեփոխութիւններու շարքին դանդաղ կ’ընթանայ դատական համակարգի արմատական բարեփոխութիւնը:

Պ.- Վերջին 50 տարիների ընթացքում, բռնատիրական կարգերից դէպի

ժողովրդավարական կարգեր անցման յաջող եւ անյաջող համաշխարհային բազմաթիւ փորձեր ենք տեսել, այդ թւում եւ նախկին խորհրդային երկրներում: Մարդիկ գիտակցել են անցումային արդարադատութեան կարեւորութիւնը եւ անցում են կատարել դէպի կայուն ժողովրդավարութիւն, որի ընթացքում, յաջորդական ընտրութիւնների շնորհիւ երկիրը առաջընթաց է ապրել տնտեսական ու քաղաքական առումներով: Տեսել ենք նաեւ մի քանի տասնամեակ յարատեւ յեղաշրջումների արատաւոր փուլ: Հայաստանի մէջ 1980-ականների վերջերի իսկական յեղափոխութիւնը, որ շատ լաւ ապագայ էր խոստանում, 1990-ական թուերի կէսերին անընդհատ յեղաշրջումների շրջափուլի մէջ մտաւ: Հիմա մենք, որպէս երկիր, սպառել ենք այս արատաւոր ճամբով գնալու չափ ու սահմանը, եւ պէտք է կամք գտնենք մեր մէջ՝ աւարտին հասցնելու բարեփոխութիւնները, կայուն յետագիծ դուրս գալու եւ կայուն ժողովրդավարութեան փուլը մտնելու:

Այդ երկրները անցումային արդարադատութիւնը կիրառել են ցանկալի փուլին հասնելու համար: Մենք պէտք է սովորենք այդ երկրների փորձով: Եթէ դա չանենք՝ կրկին կը մտնենք արատաւոր յեղաշրջումների փուլը, ինչը շատ վտանգաւոր է: Միւս կողմից, դա մեզ բոլորիս, բոլոր գիտակից քաղաքացիներիս, այդ թւում՝ այս փուլի անհրաժեշտութիւնը գիտակցող սփիւռքահայերին, պէտք է դրդեն ուժերը միաւորել եւ ստեղծել այնպիսի մի բեւեռ, որը կը փորձէր իրականացնել այդ փոփոխութիւնները եւ աւարտին հասցնել յեղափոխութիւնը Հայաստանում:

Հ.- Ձեր հրապարակային ելոյթին մէջ յայտնեցիք ընդդիմութեան անցնելու դիրքորոշման մասին: Որո՞նց հետ գործակցիլ կը ծրագրէք:

Պ.- Պատրաստ ենք համագործակցելու բոլոր այն ընդդիմադիր հոսանքների հետ, որոնք թաթախուած չեն եղել նախկին վարչակարգի հետ համագործակցութեան ճահիճի մէջ եւ չեն մասնակցել Մարտի 1-ին, այլ մասնակցել են յեղափոխական գործընթացին: Այսինքն չկայ խտրականութիւն: Պատրաստ ենք համագործակցելու այն բոլոր ուժերի հետ, որոնք գիտակցում են անհրաժեշտութիւնը կասեցնելու վրէժխնդրականութիւնը Հայաստանում եւ արատաւոր յեղաշրջումների փուլ չմտնելու համար բաւական դիմադրողականութիւն են ցուցաբերում:

Հ.- Մեզի եւ հարիւրաւորներու համար զարմանալի է, թէ ինչո՞ւ մինչեւ օրս բանտարկուած կը մնան «Սասնա Ծռեր»ի կարգ մը անդամներ:

Պ.- Ոչ միայն բանտում են, այլեւ ամենից անհեթեթ բանը, որ կարող է լինել՝ դա այսպէս ասած, յեղափոխութիւնից յետոյ Պասթիլում քաղաքական բանտարկեալներ ունենալն է:

Մի կողմից այդ հանգամանքը, միւս կողմից էլ «Ս.Ճ.»ի շարունակուող խեղկատակ դատավարութիւնը խօսում են յեղափոխութեան անաւարտութեան մասին: Յեղափոխութիւնից յետոյ համարեա երկու տարի տեւող եւ հին ռեժիմի կարած մեղադրանքներով նման անհեթեթութիւնը չպէտք է շարունակուի: Մինչ պետական ահաբեկչութիւն իրականացրած իշխանութիւնը մեզ մեղադրանք ներկայացրեց, որը շարունակում է պահպանուել, երկրորդ նախագահի դէմ զուգահեռ դատ է գնում՝ նրան մեղադրելով սահմանադրականութեան տապալման մէջ: Ստացւում է՝ մի կողմից Հայաստանում ընթանում է 2008 թուականից սկսած սահմանադրականութեան տապալման դատավարութիւն, միւս կողմից էլ սահմանադրականութիւնը վերականգնելու փորձի համար դատում են այն ուժերին, ովքեր այդ սահմանադրականութեան տապալման դէմ ապստամբուել են 2016-ին: Իրաւական այս անհեթեթութիւնը շարունակւում է, որով ի յայտ է գալիս յեղափոխութեան անաւարտութեան այս վիճակը: Կարծում եմ, թէ սա կապուած է մեր երկրորդ հարցի հետ, որին պատասխանեցի քիչ վերեւ:

Պատճառներ են բերում, թէ իբր անիմաստ ձեւով գնացել ենք տարածք գրաւելու կամ կողոպուտ կատարելու նպատակով: Ոչ ոք իսկական դրդապատճառների մասին չի խօսում, իսկ առանց դրդապատճառների քննութեան՝ դատավարութիւն չի կարող լինել: Սա խտրական վերաբերմունք է եւ հակասութեան մէջ՝ զուգահեռ ընթացող Քոչարեանի դատավարութեան հետ: Այս անհեթեթութիւնից հրաժարուել հնարաւոր է, եթէ երկրում անցումային դատավարութեան մեխանիզմներ սկսեն կիրառել:

Հ.- Ըստ «Սասնայ Ծռեր»ի՝ ո՞ւր կը թերանայ սփիւռքը եւ ի՞նչ կ'ակնկալուի հայութեան այս հատուածէն:

Պ.- Ապրում ենք նոր ժամանակներում, որոնք նոր մարտահրաւէրների առաջ են կանգնեցնում ողջ հայութեանը թէ՛ Հայրենիքում եւ թէ՛ սփիւռքում: Պիտի հասկանանք, որ պետութիւն ասածը դա պետութեան զարդարանքները (*տեքորացիա*) չեն. անկախ պետութիւն ստեղծելը սուր մտքի եւ սրտի շատ լուրջ աշխատանք է: Դա վերաբերում է թէ՛ հայաստանցիներին եւ թէ՛ սփիւռքահայերին, քանի որ մենք խօսում ենք պետական լուրջ վարչամեքենայ ստեղծելու մասին: Մենք տակաւին չենք ստեղծել ըստ էութեան անկախ պետութիւն իր ազատագրուած մարմիններով: Անկախութիւնից յետոյ մեր պետութիւնը զաւթել է կազմակերպուած քրէական յանցախումբը (*պանտա*), որը նաեւ օրէնքներն է զաւթել: Ցաւօք սրտի, այդ յանցախումբը յատկապէս սփիւռքի կողմից ընկալուել է որպէս հայութեան շահերի արտայայտիչ, մինչդեռ նրա անդամները պետութիւնը շահագործել են միայն իրենց սեփական շահերի համար՝ ի վնաս համայն հայ ժողովրդի: Տեսնում ենք, որ հարիւրհազարաւոր մարդիկ են արտագաղթել, տասնեակ հազարավոր ընտանիքներ են քայքայուել, ժողովուրդը թալանուել է,

տնտեսութիւնը՝ կործանուել, իսկ մի խումբ մարդիկ միլիոնատէր կամ միլիարդատէր են դարձել: Այդ ամբողջը մենք, նկատի ունեմ նաեւ սփիւռքը, յաճախ անտեսել ենք, ասելով՝ լա՛ւ, անտեսենք յանուն Հայաստանի շահի: Ո՛չ, Հայաստանը այստեղ չի շահել, Հայաստանը այստեղ միայն կորցրել է:

Սփիւռքում յաճախ մտածել են, թէ մեր թշնամիները յանկարծ չյարձակուեն մեր վրայ՝ քաղաքական ցնցումների առիթներից օգտուելով: Ընդհակառակը, երբ մենք յեղափոխութիւնն արեցինք եւ ամբողջ ժողովուրդը մասնակցեց, նրանք նման արկածախնդրութիւնից աւելի զգուշացան: Մենք ցնցումներ չէինք ուզում, ուզում էինք անհնազանդութեան խաղաղ ցոյցերի միջոցով մեր ձայնը լսելի դարձնել:

Քաղաքական գիտակցութեան խնդիր ունենք: Մեզ անհրաժեշտ է պետութիւնը զաւթած յանցախմբի գործունէութեանը քաղաքական գնահատական տալ: Դրանից պէտք է սկսուի Հայաստանում քաղաքական յեղափոխութեան յաջորդ փուլը: Սփիւռքում պէտք է գիտակցեն, որ առաջ գնալն անհնարին է առանց քաղաքական գնահատական տալու, որի էութիւնը պետութեան զաւթումը արձանագրելն է: Այստեղից էլ պէտք է սկսել անցումային արդարադատութեան գործողութիւնները, քաղաքական դատավարութիւնները եւ համերաշխութեան հաստատումը: Պետութեան զաւթմանը նուազ չափով մասնակցած հատուածների մեծ մասին համաներում պէտք է լինի, բայց ոչ երբեք այն պարագլուխների համար, որոնք կազմակերպել են այդ զաւթումը: Կարծում եմ, թէ սրա գիտակցումը բաւարար չափով չկայ սփիւռքում, ինչո՞ւ չէ՝ նաեւ Հայաստանում:

Քաղաքական գիտակցութեան բարձրացումը թէ՛ Հայաստանում եւ թէ՛ սփիւռքում՝ կարեւոր նախապայման է իսկապէս անկախ պետութեան ստեղծման համար, պետութիւն, որը կը պաշտպանի հայերի շահերը թէ՛ Հայաստանում եւ թէ՛ սփիւռքում:

Հ.- Արտերկրի հայութեան մէջ հնուց ի վեր գերիշխող է այն կարծիքը, թէ առանց Ռուսաստանի մենք չենք դիմանար, որ Ռուսաստանը մեր միակ դաշնակիցն է թշնամիներով շրջապատուած այդ տարածաշրջանին մէջ: Ի՞նչ կ'ըսէք այս մասին:

Պ.- Մենք երկար պատմութիւն ունեցող ժողովուրդ ենք եւ պատմական դասեր առնելու պէտք ունենք: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, անցնող հարիւրամեակում երկու անգամ ականատես ենք եղել այն իրականութեան, որ Ռուսաստանը ի՛ր շահերից ելնելով լքել է մեզ: Նոյնը եւ ուրիշ մեծ պետութիւններն են արել: Ուրեմն առողջ բանականութիւնը յուշում է, որ մենք ամենից առաջ պէտք է ապաւինենք մեր սեփական

ուժերին, մեր սեփակա՞ն բանակին ու բանականութեան, որոնք մեր բնական ու միակ դաշնակիցներն են: Դա նշանակո՞ւմ է, թէ մենք անկարող ենք պաշտպանել մեր հայրենիքը, թողնենք, քոչենք ու գնա՞նք մեր երկրից: Իհարկէ ո՛չ:

Մենք ապրել ենք այստեղ հազարամեակներ, կորցրել ենք մեր անկախութիւնը, կրկին անկախացել: Ռուսաստանը այս տարածքներում յայտնուել է ընդամէնը երկու հարիւր տարի առաջ: Բայց չէ՞ որ, ինչպէս ասացի, այստեղ գոյութիւն ենք ունեցել հազարամեակներով, եւ յայտնի չէ թէ ռուսները այստեղ ո՞րքան ժամանակ կը մնան: Մենք պէտք է ինքներս մտածենք այս մասին, հետեւաբար մե՛նք պիտի լինենք մեր պաշտպանը: Այն ազգը, որ հրաժարւում է ինքն իրեն պաշտպանելու իր բնական իրաւունքից՝ դատապարտուած ազգ է, զրկւում է անկախութիւնից եւ սեփական ճակատագիրը իր ձեռքով կերտելու հնարաւորութիւնից: Ամէն ազգ պէտք է իր պաշտպանութիւնն ու անվտանգութիւնը ի՛նք կազմակերպի:

Գալով Ռուսաստանի հետ մեր յարաբերութիւններին, բնական է, մենք կարող ենք տարբեր տիպի յարաբերութիւններ ունենալ թէ՛ Ռուսաստանի, թէ՛ ԱՄՆի, թէ՛ Իրանի, թէկուզ Թուրքիայի հետ: Բոլոր յարաբերութիւնների պարագայում՝ ճիշտ հաշուարկներ պէտք է անել: Կարող է մեր շահերը համընկնեն Ռուսաստանի շահերի հետ, կարող է հակասեն իրար կամ հակասեն Ռուսաստանում իշխանութեան մի թեւի շահերին: Օրինակ, ենթադրենք Ռուսաստանը ուզում է մեր անվտանգութեանը լրջօրէն սպառնացող զէնքեր տալ Թուրքիային, որի մասին հիմա խօսակցութիւններ կան: Ռուսաստանը հիմա միջուկային էլեկտրակայան է կառուցում Թուրքիայում, ուրեմն՝ անհանգստանալու տեղիք ունենք:

Ուզում եմ ասել, որ պետութիւնների միջեւ յարաբերութիւնները շատ *տինամիք* են այսօրուայ յարափոփոխ աշխարհում. Ռուսաստանի շահերը այսօր կարող են համընկնել Թուրքիայի շահերի հետ, վաղը կարող են հակասել: Տեսնում ենք, թէ ինչպէս վերջին 2-3 տարիների ընթացքում ռուս-թուրքական յարաբերութիւնները անընդհատ փոփոխւում են. օրինակ, նրանց միջեւ հակասութիւնները վերջին ամիսներին շատ են սրուել Սիրիայի Իտլիպի նահանգում: Նման յարափոփոխ վիճակում, պէտք է ճկունութիւն ունենանք, մեր սեփակա՛ն շահերից ելնելով յարաբերութիւններ ունենանք բոլորի, այդ թւում եւ Ռուսաստանի հետ: Այստեղ պէտք չէ խտրականութիւն դնել եւ կրկնել, թէ մեր շահերը համընկնում են ՄԻԱՅՆ Ռուսաստանի շահերի հետ: Ռուսաստանում տարբեր ուժեր կան, կարծէք թէ անցումային վիճակ կայ այնտեղ՝ սահմանադրական բարեփոխութիւններ եւ այլն եւ այլն: Սա շատ բարդ իրավիճակ է ստեղծում մեզ համար, ուստի պէտք է շատ զգոյշ լինենք:

Ամէն դէպքում, մեր յոյսը պէտք է մե՛ր վրայ դնենք եւ ճկուն դիւանագիտութեամբ վարենք մեր յարաբերութիւնները տարբեր պետութիւնների հետ:

Հարցազրոյցը վարեց

Մինաս Գոճայեան

There are no comments yet.